

**Ավարդ Ալեքսանյան
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության
ամբիոնի դասախոս, իրավ. գիտ. թեկնածու**

**ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԻՏՔԸ ԿԻԼԻԿԻԱՅԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Կիլիկիայի պետությունն իր կառավարման ձևով ավատական միապետություն էր: Ուներ իրավական և քաղաքական կայացած համակարգ, վերածննդի մշակույթին բնորոշ դրսերումներով: Հայոց քաջակուրը, որպես պետության գլուխ, մարմանվորում էր երկրի գերազույն իշխանությունը և օգտվում էր միապետին վերապահված իրավունքներից: Նա երկրի օրենսդիր, գործադիր և դատական բարձրագույն մարմինն էր: Երկրի կառավարման կենտրոնը, որի միջոցով վճռվում էին բոլոր կարևորագույն հարցերը, արքունիքն էր: Կիլիկիայում, արևմտաեվրոպական երկրների օրինակով, արքունիքում գործում էր բարձրագույն կամ վերին ատյանը՝ որպես օրենսդրական–խորհրդակցական բարձրագույն մարմին: Բարձրագույն ավագանու այդ խորհրդության միաժամանակ պետության գերազույն դատարանն էր: Որպես ճյուղային կառավարման կենտրոնական մարմիններ, գործում էին գործակալությունները, որոնք գլխավորում էին պալատական բարձր աստիճանավորները՝ գործակալները: Դատական համակարգը բաղկացած էր արքունի դատարանից, Սիսի արքեպիսկոպոսական ատյանից, գավառական դատարանից, հոգևոր-եկեղեցական, թեմական ատյաններից:

Դետական, քաղաքացիական, քրեական, ժառանգական, ամուսնարնտանեկան և մյուս իրավահարաբերությունները կարգավորվել են հայոց կանոնագրքի, հունա-հռոմեական, Երուսաղեմի, Անտիոքի օրենքներով: Սմբատ Սպարապետի դատաստանագիրքը ի հայտ գալուց հետո հայկական ֆեոդալական պետության մեջ կիրառվել է և մեծ դեր է խաղացել միապետական կառավարման ձևի ամրապնդման գործում:

Կիլիկիայի իրավաքաղաքական և հասարակական-քաղաքական ներքին խնդիրներին նվիրված հուշարձաններից են Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը: Հայ ժողովրդի արտաքին հարաբերությունները լուսաբանող ամենաազքի ընկնող ժողովածուներն են «Արմատ հավատոն 4-րդ ժողովածուն» և «Դաշանց թուղթե կոչվող փաստաթուղթը: «Արմատ հավատոն ժողովածուն պատմա-դասվանաբանական նյութերի ժո-

դովածու է և ծնունդ է առել այն ժամանակաշրջանում, երբ քաղկեդոնական գաղափարախոսության ներկայացուցիչները, չհանդուրժելով հայոց թագավորության վերահաստատումը (Լևոն Բ-ի թագավորությունը 1198 թ.), նոր արշավ էր սկսել Կիլիկիայում: Այս առումով այն արժեքավոր փաստաթուղթ է Կիլիկիայում ծավալված հակաքաղկեդոնական պայքարի պատմության մեջ: Անհայտ հեղինակի կողմից գրված «Դաշնաց թուղթը» միաբանության դաշինք է, որ իրեւ կնքել են Կոստանդինոս կայսրն ու Սեղբեստոս պապը մի կողմից, Տրդատ թագավորը և Գրիգոր Լուսավորիչը՝ նյու կողմից: Այնտեղ նկարագրվում է Տրդատի և Գրիգոր Լուսավորիչի՝ Հռոմ գնալու առասպելը իրեւ եղելություն: Հռոմում պապը կաթողիկոս է ձեռնադրում Գրիգոր Լուսավորիչին, տախի է նրան վրաց ու աղքանից եկեղեցիների, ինչպես նաև Երուսաղեմի, Անտիոքի ու Ալեքսանդրիայի պատրիարքների ձեռնադրության իրավունքը: Դաշինքը սահմանում է Հայաստանի հասարակական հարաբերությունները: Հայերը պետք է տիրող դիրք ունենան ոչ միայն մուսուլմանների, այլև քրիստոնյաների ու սիրիացիների հանդեպ: «Այս լեզենդը կոչված է հիմնավորելու և վավերացնելու հայ-հռոմեական կողմնորոշման և նրա հետ առնչվող պահանջներն ու սպասումները»¹:

Կիլիկիայի քաղաքական և իրավական միտքն աչքի է ընկնում իր տեսական հարուստ ժառանգությամբ և պետական, եկեղեցական գործիչների քաղաքական-պետական ակտիվ գործունեությամբ: Իրավաբանական, հասարակական-քաղաքական մտքի նշանավոր գործիներ են Ներսես Շնորհալին (1098-1173), Ներսես Լամբրոնացին (12-րդ դար), Վահրամ Ռաբունին (13-րդ դար), Սմբատ Սպարապետը (1208-1276) և մյուսները:

Ներսես Շնորհալին² թողել է հարուստ գրական ժառանգություն՝ մեկնություններ, թղթեր, ճառեր, շարականներ, գանձեր, ներքողներ, պոեմներ: Հայ իրավաքաղաքական մտքի պատմության համար կարևորվում են հատկապես նրա՝ կաթողիկոս ընտրվելու կապակցությամբ արտասահմած «Ատենախոսություննե կոչվող իրապարակային ճառը և «Թուրք լնդիանականը», որը կաթողիկոսի ուժիղձն էր՝ ուղրված հայ ծողովրդին: «Թղթին ներածական մասում, իր խոսքն ուղղելով աշխար-

¹ Հ. Գ. Մանուչարյան, Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմության, Երևան, 2002, էջ 83:

² Ծնվել է 1100 թ. Կիլիկիայի Ծովք ամրոցում, 1166 թ. նա ընտրվել է հայոց կաթողիկոս և հաստատվել է Հռոմկալայում, ուր և 1173 թ. կնքել է իր մահկանացուն:

հասփյուռ հայությանը, ցավով նշում է, որ թշնամիներով շրջապատված լինելու պայմաններում անհնար է համախմբել հայ ժողովրդին: Այդ պատճառով, ինչպես նաև գրում, «Այս տոք քարանձավում՝ իբրև կամավոր բանտում և կապանքներում փակված, խոսքի փոխարեն մեր գրածով ենք խոսում բոլոր նրանց հետ, ովքեր լսելու ականջ ունենեն¹: Նա հայ ժողովրդի յուրաքանչյուր դասին տալիս է համապատասխան խորհուրդներ ու խրատներ: Այդ խրատներով նա քացահայտում է իր ժամանակի արատավոր բարքերը, դատապարտում է անքույլատրելի արարքները և հասարակության տարրեր շերտերին ուղղված իր խրատներով պահանջում է վերջ տալ հանցավոր արարքներին, այն ամենին, ինչ դատապարտելի է աստվածային և մարդկային օրենքներով: Այս խրատներում հեղինակը շոշափում է հասարակական քաղաքական և քրեական վազմաքարտիկ հարցեր: Խրատները իր ժամանակին լայն մասսայականություն են վաելել և ինչ որ չափով կարգավորել են հասարակության ներքին կյանքը, ուրվագծել են նրանց վարագիծը: Այս կապակցությամբ Ա. Թ. Թովմասյանը նշել է, որ «Ներսես Շնորհալու այն բազմաթիվ խրատներին, որոնք միջնադարյան Հայաստանում օրենքի ուժ ունեին»:² Նոյն նպատակն է հետապնդել նաև Շնորհալին՝ գրելով. «Այժմ Աստծո և մեր հրամանով սա կանոնական օրենք քող լինի այնպիսիների համարէ»: Միաժամանակ նաև, արտահայտելով կամքի ազատության գաղափարը, նկատում է, որ յուրաքանչյուր մարդ ազատ է իր գործողություննով, և ինքն է որոշում իր խրատներին հետևել թե՞ ոչ. «Այնուհետև անելը կամ շանելը յուրաքանչյուրի կամքն էն»:

Այս խրատներին հետևելով՝ մենք պատկերացում ենք կազմում ժամանակի հասարակության սոցիալական կառուցվածքի, հասարակական-քաղաքական, իրավական մքնողորտի և Շնորհալու հայացքների մասին: Հայոց հայրապետը հատկապես պահանջկուտ է հոգևորականների նկատմամբ: Շնորհալին ճգոտում է նրանց առաջնակարգ տեղ ապահովել ազգային կյանքում: Նրանց վրա է դնում աշխարհիկ դասերի բարոյական ու մտավոր դաստիարակության պարտականությունը: Իշխան-

¹ Ներսես Շնորհալի, «Թուղթ Ընդհանրական», «Երգեր», «Հանելուկներ», «Եղիսիայի ողբը», «Հիսուս Որդի», Իրավունք, 2008, էջ 23:

² Ա.Թ. Թովմասյան, Հիմ և միջնադարյան հայ քրեական իրավունք, Երևան, 1977 թ., էջ 273:

³ Ներսես Շնորհալի, «Թուղթ Ընդհանրական», «Երգեր», «Հանելուկներ», «Եղիսիայի ողբը», «Հիսուս Որդի», Իրավունք, 2008, էջ 34:

Աերից Ծնորհալին պահանջում է իրենց ենթակաների նկատմամբ լինել հոգատար, խոհեմ և իմաստում: Նա իշխողներին զգուշացնում է, որ բոլոր մարդկանց բնությունն էլ նույնն է, ստեղծված են միևնույն կավից, և նրանց նկատմամբ վաստ չպետք է վերաբերվեն. «Քանզի նրանց բնությունը ձեզանից տարբեր չէ, այլ նույն կավից ու շաղախից եք ստեղծված: Ամենքն էլ գորգահավասար ծննդյամբ են աշխարհ գալիս և մահով ենում այստեղից: Այս ամենից Ծնորհալին իշխաններից պահանջում է, որ բարարեն աշխատավորների մինիմում պահանջները:

Ծնորհալին բողոքում է ֆեռդալական կարգերի ծայրահեղ անօրինականությունների դեմ և ոչ թե այդ կարգերի դեմ ընդիմանրապես: Նա մտահոգված է ավատատիրական իրավակարգի և օրինականության պահպանմամբ: Նրա նպատակն է գոյություն ունեցող կարգերը մաքրել անօրինականությունից և ֆեռդալական հարաբերությունները դնել ճիշտ ուղղություն: Զարգացած ֆեռդալիզմի վերջին շրջանում երևան էին եկել հարստության կուտակման նոր ձևեր, որոնց հետ Ծնորհալին չէր հաշտվում: Նա գրում է, որ իշխանություն և հարստություն կարելի է ձեռք բերել օրինական ճանապարհով: Նա հարստության կուտակման ազօրինի ձևեր է համարում գողությունը, կողոպուտը խարդախությունը: Աստվածային օրենքների մեջ, սպասությունից և շնուրյունից հետո Ծնորհալին երրորդ չարիքը համարում է գողությունը: Ըստ Ծնորհալու՝ գողության հանգամանքը պայմանավորված չէ գորդագված իրի քանակով և արժեքով, այլ երևույթի եռթյամբ: Նա տալիս է նաև գողության հասկացությունը. «Ով ձեռքը երկարում է որևէ, իր վերցնելու և այս կամ այն կողմ է նայում, որ առարկայի տերը շտեսնի և իրեն բռնի..., այնպիսին գող է, և արածը գողությունները»:

Կարենորելով ընտանիքի դերը ազգապահպան մեծ գործում՝ ամուսնա-ընտանեկան հարաբերությունների ոլորտում շնորհվել է առաջադիմական հայացքներ, որոնք նպաստել են հաստատուն ընտանիք կազմելուն: Որպեսզի ընտանիքը հիմնված լինի փոխադարձ սիրու և վստահության վրա, ամուսնությունը պետք է կատարվի ամուսնացողների փոխադարձ համաձայնությամբ: Արգելում է ամուսնությունը կատարել հարկադրաբար և առանց ամուսնու և կնոջ կամքի: Ամուսնական տարիք է սահմանում տղաների համար 15 տարին, աղջիկների համար 12 տարին: Արգելում է մինչև չորրորդ աստիճանի ազգականների ամուսնությունը՝ բացատրելով թե ինչ պատճառով են սուրբ հայրերը չորս թիվը կանոնակարգել, որպես ամուսնության սահման: «Քանի որ մարմնի բնությունը

կազմված է չորս տարրերից, մարմնական ազգություններն ել մինչև չորս թիվն է հասնումներ¹:

Մշտակարյան Կիլիկյան Հայաստանում հասարակական մեծ վտանգափորություն է Աերկայացրել առևանգմամբ ամուսնությունը, որը մարդկանց միջև հանգեցրել է թշնամության, որի հետևանքով ծանր հանցագործություններ են կատարվել: Ծնորհային և արգելում է առևանգման դեպքում պատկանակ կատարել, քանի որ այն բյուր չարիքների պատճառ է:

Ծնորհալու քաղաքական պրակտիկ գործումներության ու քաղաքագիտական տեսական ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում ազգապահպան արտաքին գործոնների հայտնագործման ու մշակման հիմնահարցերը:

Եկեղեցիների միության խնդիրը 12-րդ դարում քրիստոնյա աշխարհը հուզող գլխավոր հարցն էր: Հունա-լատինական գործիչները միությունը հասկանում էին բոլոր Եկեղեցիների միավորում լատինական կամ բյուզանդական Եկեղեցու հովանու ներքո: Յուրաքանչյուր ազգային Եկեղեցի ազատ և ինքնիշխան համարելով՝ նկատում է, որ Եկեղեցիները պետք է միավորվեն հավասարության և փոխըմբռնման սկզբունքով: Նա սովորեցնում էր, որ հունական, հայկական, ասորական, լատինական Եկեղեցիները կարող են միմյանց շատ բան սովորեցնել և պահպանել Եկեղեցու խարարվող հեղինակությունը հասարակության մեջ:

1144 թ. Եղեսիայի գրավման առիթով Ծնորհալին գրում է «Ողբ Եղիսյե-պրեմը՝ ոգևորելով և արթնացնելով հայ ժողովոյի հայրենասիրական զգացումները: Անդրադառնալով իր ժամանակի պատմական անցքերին՝ արտահայտել է իր մտորումները հայ ժողովոյի քաղաքական ճակատագրի մասին, շոշափել համայն հայության գոյության խնդիրը: Ողբը հայրենազուրկ հայի համար եղել է կորսված հողի, երազի ու սփոփանքի երգ, միաժամանակ նրա մեջ շարունակ բորբոքել է ապագայի հավատ ու կենսափրություն:

Ծնորհալին, Ակարագրելով ողբերգությունը, դուրս է Եկել ազգային ներ շրջանակից և արտահայտել է համանարդիկային շահեր: Դատապարտել է անարդարացի և արյունահեղ պատերազմները, հանդես է Եկել խաղաղության շատագով և ցույց է տվել պատերազմի ծանր հետևանք-

¹ Ներսես Ծնորհալի, «Թուղթ Ընդհանրական», «Երգեր», «Համելուկներ», «Եղիսիայի ողբը», «Հիսուս Որդի», Իրավունք, 2008, էջ 75:

ները այդ քաղաքում ապրող աստրացիների, հույների և մյուս ազգերի համար: Նա իր քաղաքական հայացքներում արտահայտել է այս կարծիքը, որ տարբեր ազգերը դժբախտության մեջ պետք է օգնեն միմյանց: Նկարագրելով Եղեսիա քաղաքի բնակչության ողբերգական վիճակը՝ Ընորհալին դիմել է համայն մարդկությանը, որպեսզի նրանք տեղյակ լինեն նրանց աղետալի վիճակի մասին և դատապարտեն կատարած ոճրագործությունը: «Քայց աղետոր իմ ցավալի փոքրագույն դեղը չի բուժի, վերս մեկը չէ, որ փակվի, կամ թե որևէ մեկն ափովի: Այս աղետին կարեկցելու համար պետք է ձայնով աղերսալի գոշել չորս կողմն աշխարհի, որ հանուր մարդկությունը լսի»:¹

Այսպիսով, նա դատապարտում է օտար նվաճողներին, որոնք ոտնահարում են ազգերի ապրելու իրավունքը և ծառում են ոչ միայն թալանել այլ երկրներ, այլև տիրել ընթմիշտ՝ զավթած տարածքների բնակիչների մասսայական ոչնչացման կամ իրենց ազգի հետ ձուլման միջոցով: Այդ չարագործությունները կանխելու մեկ պետության ուժը անրավարար կլինի, ասել է Ընորհալին: Ինչպես տեսնում ենք, նրա հայացքներում զարգանում է միջազետական համաձայնագրեր կնքելու անհրաժեշտության պահանջը՝ նվաճողական պատերազմներ վարող պետություններին կարգի հրավիրելու և նրանց արշավանքը կանխելու համար: Միաժամանակ նա գտնում է, որ նման պայմանագիր կարող է կնքվել միայն օրինավոր պետությունների և ազգերի հետ: Եղեռնագործ պետությունների կողմից անմեղ մարդկանց մասսայական սպանություններից ու գերությունից ազատելու համար Ընորհալին առաջարկում է, որ մի քանի պետությունները միավորվեն. «Պնդեցին և հաստատեցին, ուխտեցին և խստացան»²:

Ներսես Լամբրոնացին³ բողել է հարուստ ժառանգություն՝ մեկնություններ, քարոզներ, ճառեր, նամակներ, շարականներ, տաղեր, օրինության կանոններ: Հռոմելայի համագումարը ժողովին (1179 թ.) արտասա-

¹ Ներսես Ընորհալի, «Թուղթ Ընդհանրական», «Երգեր», «Հանելուկներ», «Եղեսիայի ողբք», «Հիսուս Որդի», Իրավունք, 2008, էջ 139:

² Ներսես Ընորհալի, «Որ Եղիսոյ», Իրավունք, 2009, էջ 147:

³ Ծնվել է 1153 թ. Լամբրոն բնակավայրում, աշխարհական անունը՝ Սմբատ Հեթումյան. պետական և եկեղեցական գործիչ, հրապարակախոս, քանաստեղծ, քարզմանիշ, փիլսոփա, մատենագիր: 16 տարեկան հասակում Ներսես Ընորհալին նրան քահանա, տալով նրան իր անունը՝ Ներսես: 1175 թ. կարգվել է Տարսոս քաղաքի եպիսկոպոս: Մահացել է 1198 թ.:

նած «Ատենախոսություն» ճառը, որը թարգմանվել է նաև գերմաներեն, համարվում է հրապարակախոսության լավագույն կորող:

Ներսես Լամբրոնացին արտահայտել է փիլիսոփայական, իրավաքաղաքական սոցիալական հայացքները: Հետաքրքրություն են ներկայացնում նրա այն հայացքները, որոնք վերաբերում են մարդկային կամքի ազատությանը: Մարդկանց չար և բարի արարքները ոչ թե նախասահմանված են աստծո կողմից, այլ մարդու ազատ կամքի արտահայտությունն են. «նրանց կուրանալի ու մոլորվելը սեփական կամքով էր»:¹ Ըստ նրա՝ այն ազատությունն է օգտակար, որն ընդունում է հասարակությունը: Հենց այս տեսանկյունից էլ քննադատել է հասարակական այն հարաբերությունները, որոնք վնասում են հայրենիքին, ազգին, մարդկանց: Նա հասարակության մեջ, պետական գործերում հաջողությունը պայմանավորվորում է դեկավարների օրինական վարքագծով, նրանց բարոյական կերպարով:

Ըստ նրա՝ պետությունը ստեղծված է աստծո կողմից, որպեսզի նրանք արդարությամբ կառավարեն մարդկանց, կարգավորեն երկրի ներքին և արտաքին գործերը: «Աստված է իր անքննելի նախախնամությամբ թագավորներ ու իշխաններ կարգում»², և պահանջում է՝ «արդյոք արդարությա՞մբ եք կառավարում մարդկանց, թե՞ հարստահարելով»: Որպես իր ժամանակի մտածող՝ նա պետական կառավարման միակ ձևը համարել է միապետականը: Թագավորից պահանջել է արդարադատ լինել, չկատարել չար գործեր, քանի որ նա ինքնիշխան չեն: Միաժամանակ, նրա կարծիքով, միապետական անսահմանափակ իշխանության պայմաններում թագավորը կարող է բռնակալ դառնալ: Նա բռնակալ է համարում նրանց, ովքեր «շատերին և ոչ իրենց կամքով են ստիշպում իրենց հետապնդվել»³: Պետական- հասարակական խնդիրները պետք է ստանան իրենց լուծումը խորհրդակցելու միջոցով: Նրանց խորհուրդ է տալիս հետևել Հռոմեացի աշխարհակալների օրինակին, լսել բանիմաց մարդկանց խորհուրդները: «Այս ըմբռնումներով նա ընդիուալ մոտենում է

¹ Ներսես Լոմբրոնացի, «Քաղաքային Օրենք», «Զինվորական օրենք», «Հավատամքի մեկնությունը», «Հայր մեր»-ի մեկնություն, «Սոլոմոնի իմաստության մեկնությունը», Իրավունք, 2009, էջ 141:

² Նոյն տեղը, էջ 146:

³ Նոյն տեղը, 149 էջ:

սահմանադրական միապետության կառավարման ձևին և կոլեգիալ ղեկավարության անհրաժեշտության գաղափարին»¹:

Ներսես Լամբրոնացին մեծ նշանակություն է տվել օրենքներին՝ հասարակության մեջ չարագործությունները վերացնելու արդարություն հաստատելու համար: Նա նույնացնում է արդարությունը և օրենքները: Արդարացի է նաև այն, որ օրենքը խախտողների նկատմամբ կիրառվում է բռնություն: «Ինչպես աստվածապաշտներն իրքն օրենք ունեն արդարությունը, այնպես էլ մենք բռնությունն ընդունենք՝զրկելու և անհրավելու համար»²:

Լամբրոնացին տարբերում է աստվածային և մարդկային օրենքներ: Աստվածային օրենքները աստծոն պատվիրաններն են, որոնք տարածվում են մարդու հոգու բանական, ցամանական և ցանկական մասերի վրա: «Սրանց վրա է Աստծոն տեսչությունը»³: Քանի որ աստվածային օրենքները համապատասխանում են մարդու բնույթին, հետևաբար այն բնական օրենքն է. «Սոլորեերեց նրանց բնական օրենքներից դեպի անաստվածություն»:⁴ Մարդկային օրենքները գրված օրենքներն են, որոնց բացակայությունն էլ իր ժամանակաշրջանում բազմաթիվ չարագործությունների և կամայականությունների պատճառ է դարձել: Այդ պայմանավորված անհրաժեշտությամբ և իրավական հարուստ գիտելիքներով Ներսես Լամբրոնացուն հնարավորություն տվեցին ասորերնից և հունարենից բարգմանել «Քաղաքային օրենքը» և «Զինվորական օրենքը», որոնք կոչված էին կարգավորելու քաղաքացիական, ժառանգական, ամուսնա-ընտանեկան, քրեական, դատական և զինվորական հարաբերություններ: Այս բարգմանության համար նրան մեղադրել են օտարամոլության մեջ այն պատճառով, որ նա, հայկական օրենքներ ստեղծելու փոխարեն, այլ ազգերի օրենքներ է բարգմանել և կյանքի կոչել: Սակայն իր կատարած բարգմանության հիշատակարանից պարզվում է, որ նա բարգմանությունը կատարել է ժամանակի պահանջով և կարողիկոս Գրիգոր Տղայի պատվերով: Բացի այդ, նա ոչ թե սոսկ պատճենահանել է օտար օրենքները, այլ վերամշակման ենթարկել դրանք,

¹ Հ. Գ. Մանուչարյան, Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմության, Երևան, 2002, էջ 105:

² Ներսես Լոմբրոնացի, Մեկնություն Սոլորություն Անդրոմեֆի իմաստության, Երևան, Իրավունք, 2009. էջ 124:

³ Նոյյն տեղը, 117 էջ:

⁴ Նոյյն տեղը, 121 էջ:

լրացրել և լիովին հարմարեցրել է հայ իրականությանը և հայոց բանակի պահանջներին՝ «Ծայրաքաղ» կատարել, ինչպես նաև է նշում իր բարգ-մանության հիշատակարանում:

Հայ իրավաքաղաքական մտքի Կիլիկյան դպրոցի հաջորդ նշանավոր ներկայացուցիչը **Վահրամ Ռարունին** է¹: Նա գոել է բազմաթիվ ի-մասսասիրական ու կրոնա-աստվածաբանական աշխատություններ: Նա իր իրավաքաղաքական հայացքները արտահայտել է Լևոն Յ-րդ բագավորի օծման առիթով արտասանած ճառում:

Պետության անհրաժեշտությունը կոչված է հասարակության մեջ կարգ ու կանոն ապահովելով: Աստված, ստեղծելով մարդկանց, նրանց հավասար իրավունքներ է տվել և օժտել է կամքի ազատությամբ: Բայց քանի որ մարդիկ չպահպանեցին սատվածային պատվիրանները, նա աչք փակեց այն բանի վրա, որ նահապետներից ոմանք իրենց բազավոր հոչակեցին ազգակիցների վրա իշխելու նպատակով: Պետությունը պետք է իշխանությունը իրականացնի բոլորի օգտին: Արտաքին հարաբերություններում պետությունը պարտավոր է պահպանել տարածքային ամրողականությունը: «Թագավորութիւն է ի նմա քնակելոցն իշխել արդարացիհարկս և իրավուն ի նոցանէ առնուլ, և զնոսին ի հաստատութիւն պահել արտաքին թշնամացն՝ քաջությանը պատկերազմեալ յախթել, և կամ հաղթութեան հնարին զխաղաղութիւն ողջունել»²: Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հարաբերակցության հարցում կողմնակից է աշխարհիկ իշխանության առաջնությանը:

Կիլիկյան հայկական բազավորության խոշոր պետական գործիչներից է **Սմբատ Սպարապետը**³: Նա ուազմական գործողություններին զուգներաց է ծավալել նաև քաղաքական, դիվանագիտական և իրավական գործունեություն: Տիրապետելով մի քանի լեզուների՝ բարգմանել և իրատարակել է «Անտիոքի ասիզներ» ժողովածուն: Սմբատ Սպարապե-

¹ Ապրել և ստեղծագործել է 13-րդ դարում, ծննդյան և մահվան թվականները հայտնի չեն: Պաշտոնավարել է Լևոն Գ-ի (1270-1289) արքունիքում՝ որպես ատենապահ, և տնօրինել է պետության դիվանագիտական հարաբերությունները:

² Վահրամ Ռարունին, Բան ի հայտնությին տեսան և յոծուն Լևոն Գ արքայի, «Արարատ», 1868 թ., 7, 12, 1869 թ. 1-5:

³ Ծնվել է 1208 թ. Կիլիկիայում Հայոց սպարապետ Կոնստանդին Հեթումյանի ընտանիքում: 18 տարեկանից նշանակվում է Սպարապետ և 50 տարի (1226-76 թթ.) լինելով Կիլիկիահայոց սպարապետ՝ բազմաթիվ հաղթական ճակատամարտեր է մղել՝ պաշտպանելով և ամրապնդելով Կիլիկիայի հայոց պետության սահմանները և 1276 թ. զոհվել է մարտերից մեկի ժամանակ:

տից մեզ են հասել նաև աշխատություններ, որոնցից աչքի են ընկնում «Դատաստանագիրքը» և «Տարեգիրքը»: Քաղաքական և իրավական մտքի նշանավոր հուշարձաններից է նրա «Դատաստանագիրքը» (1265 թ.): Այն իր բովանդակությանք խսկական օրենսգիրք է, դրանով լուծվել է ազգային օրենքների բացակայության խնդիրը: Ի տարրերություն միջնադարյան մյուս մտածողների՝ Մերատ Սպարապետը ուներ աշխարհիկ հայացքներ: Սակայն նա չէր կարող լիովին ազատ լինել կրոնական մտածողությունից: Թագավորական իշխանությանը ստեղծվել է աստծո կողմից: Թագավորը աստծո փոխանորդն է երկրի վրա:

Մերատ Սպարապետը կենտրոնացված միապետության կողմնակից էր. միապետին օժոտում էր բացառիկ լիազորություններով: Բայց քոյլ չէր տալիս բազավորական իշխանությանը հասցնել արևելյան բռնապետության աստիճանի, այլ որոշ իրավանորմերով սահմանափակում էր միապետի իշխանությունը: Թագավորի ամենամեծ պարտականությունը, նրա կարծիքով, ամբողջ Երկրում արդարության պաշտպանումն է և օրենքների ճիշտ կիրառումը: Արդարությունը պաշտպանելու և միասնական օրինակություն հաստատելու համար Մերատը պահանջել է բազավորից սահմանափակել իշխանների, ֆեոդալների, հոգևորականների իրավունքները իրենց ենթականներին պատմելու հարցում: Մահապատիծ իրականացնելու իրավունքը տրված էր միայն բազավորին:

Աշխարհիկ իշխանությունը գերակայություն ուներ հոգևոր իշխանության նկատմամբ: Պետության և Եկեղեցու հարաբերություններում Եկեղեցին ծառայում է պետությանը: Եկեղեցական ապաշխարանքների փոխարեն՝ Դատաստանագիրքը կիրառում է դրամական տուգանքներ:

Գահաժառանգման հարցում, ենելով պետության և հասարակության շահերից, սահմանում է այնպիսի կարգ, որի համաձայն բազավորական գահը պիտի ժառանգի արքայորդիներից արժանավորը: Դատաստանագրքում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում ընտանեկան իրավունքի մասին հոդվածները. ամուսնությունը պետք է կայանա փոխադարձ համաձայնությամբ, կամավոր, որոշակի տարիքի հասած անձանց միջև: Ավելին, պատիժ էր նախատեսվում այն հոգևորականների համար, ովքեր երիտասարդներին ստիպում էին ամուսնանալ՝ հակառակ իրենց կամքի: Այդպիսի ամուսնությունը պետք է համարվի անօրինական: Պաշտպանվում էին կանչ պատիվն ու արժանապատվությունը: Մեղադրվում էին այն տղամարդիկ, ովքեր, առանց իրավական ձևակերպման, բողնում են իրենց կանանց և ամուսնանում ուրիշների

հետ: Մմբատը առանձնակի ուշադրություն է ցուցաբերել մանուկների դաստիարակության ու ուսուցման նկատմամբ: Նա սահմանել է անվճար ուսուցում:

Ուշադրության արժանի են քաղաքացիական իրավական հարաբերություններին վերաբերվող մի շարք նորմեր: Խոսելով գրավի մասին՝ նա հիշատակում է այն իրերի սահմանափակ շրջանակը, որոնք ենթակա են գրավի, արգելում է պարտատիրոջ այցելությունը պարտապանին՝ որպեսով դա որպես ուժի կիրառում:

Ըստ ‘Դատաստանագրքի’ հանցագործության սուրբեկտը մարդն է, այն էլ որոշակի տարիքի հասած: Մմբատը տարբերում է մեղքի հետևյալ ձևերը՝ կամավոր (դիտավորությամբ), ակամա (անզգուշությամբ) և խառը: Դատաստանագրքում իրավական ձևակերպում է ստացել նաև պատմի անհատականացման սկզբունքը: Քրեական պատասխանատվության հիմքում պետք է ընկած լինի մեղքը: Մմբատը առաջ է քաշել անհրաժեշտ պաշտպանության սկզբունքը, որի դեպքում անձը չի ենթարկվում քրեական պատասխանատվության:

Alvard Aleksanyan
Chair of Theory and History of State and Law, YSU
Candidate of Legal Sciences

LEGAL-POLITICAL IDEA IN CILICIAN ARMENIA

The author, having discussed the social-political, state-legal ideas of remarkable figures from Cilician Armenia, like Nerses Shnorhali (XIII), Nerses of Lambron (XII), Vahram Rabuni (XIII), Smbat Gundestable (1208-1276), and etc., shows that the Kingdom of Cilicia had legal and political matured system, a part of which was the political-legal idea. The political-legal idea of Cilicia had rich theoretical heritage and state-political active practice of state and church agents. The social-political and state-legal idea of the Kingdom of Cilicia had features typical to that of Renaissance Culture.